ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 18 » հունվարի 2024թ.

№ ԱՍ/34.3-Մ2-12/203-2024

«ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի
տնօրեն Ա. Ջուլհակյանին

Հարգելի պարոն Ջուլհակյան,

Ձեզ են ուղարկվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 17-ի «ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելու մասին» №19-Ա և «ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելու մասին» №20-Ա որոշումների պատճենները:

Առդիր՝ 10 թերթ:

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Signed by: SAFARYAN ARTUR 2401750053

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Մ. Ղարիբյան ☎ 52-85-33 (336)

600.0019.17.01.24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2024 թվականի №19-Ա

«ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հունիսի 17-ի №260-Ա որոշմամբ «ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Եվրոէներգոհոլդինգ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0702 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0702 լիցենզիա) պայմանների 13-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2023 թվականի փետրվարի 18-ը Հանձնաժողով ներկայացնել «Եվրոէներգոհոլդինգ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2023 թվականի հոկտեմբերի 18-ը,

բ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝

Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) Կարգի №3 հավելվածի.

- 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.
  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար,
- 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից,

դ) Ընկերությունը մինչև 2023 թվականի հոկտեմբերի 18-ը չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2023 թվականի հոկտեմբերի 20-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի

կեսը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

ե) Ընկերությունը 2023 թվականի նոյեմբերի 21-ի №Ա-8 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմը և շարունակական տիրող հետպատերազմյան իրավիճակը, Սյունիքի հանդեպ Ադրբեջանի ոտնձգությունները 2021 թվականի մայիսին, 2022 թվականի նոյեմբերին, Արցախի հետ կապված 2023 թվականի սեպտեմբերյան դեպքերն, անվտանգության նկատառումներով անհնարին են դարձրել մոտենալ տարածքներին, որի հետևանքով խոչընդոտվել են հանրային լսումները, ինչն էլ հանգեցրել է Նախագծի փորձաքննության իրականացման անհնարինությանը: Ընկերությունը հայտնել է նաև, որ դիմել է համապատասխան պետական կառույցներին՝ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալու նպատակով, և դրանք ստանալուն պես՝ կներկայացնի Հանձնաժողով, որոնք, սակայն, մինչ օրս չեն ներկայացվել: Միևնույն ժամանակ Ընկերությունը խնդրել է իրավիճակը համարել ֆորսմաժորային և վերջինիս նկատմամբ չկիրառել տույժեր ու երկարաձգել Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու ժամկետը:

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0702 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2023 թվականի հոկտեմբերի 18-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի №3 հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում Ընկերությունը չի հիմնավորել Նախագիծը ԼԷ №0702 լիցենզիայով ամրագրված ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, այն պետք է հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար: Մինչդեռ Ընկերությունը

պատշաճ հիմնավորումներ չի ներկայացրել իր կողմից մատնանշված հանգամանքների ու ԼԷ №0702 լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորության չկատարման միջև ուղղակի պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ, ինչպես նաև չի ապացուցել իր կողմից անհրաժեշտ միջոցների ու ջանքերի գործադրումը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Բացի այդ, Կարգի №3 հավելվածի 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը և 8-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0702 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի հունիսի 6-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.14665.22 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 26 460 000 (քսանվեց միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) դրամ գումարից 13 230 000 (տասներեք միլիոն երկու հարյուր երեսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 26 460 000 (քսանվեց միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի օգոստոսի 2-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0702 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2024 թվականի հունիսի 18-ը.
2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0702 լիցենզիայի գործողությունը կկասեցվի:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱԴԱԼՅԱՆ

ք. Երևան
17 հունվարի 2024թ.

600.0020.17.01.24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2024 թվականի №20-Ա

«ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հունիսի 17-ի №261-Ա որոշմամբ «ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Աջաբաջ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0703 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0703 լիցենզիա) պայմանների 13-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2023 թվականի փետրվարի 15-ը Հանձնաժողով ներկայացնել «Աջաբաջ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2023 թվականի հոկտեմբերի 15-ը,

բ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝

Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) Կարգի №3 հավելվածի.

- 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.
  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար,
- 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման՝ լիցենզավորված անձի կողմից,

դ) Ընկերությունը մինչև 2023 թվականի հոկտեմբերի 15-ը չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2023 թվականի հոկտեմբերի 20-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի

կեսը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

ե) Ընկերությունը 2023 թվականի նոյեմբերի 21-ի №Ա-9 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմը և շարունակական տիրող հետպատերազմյան իրավիճակը, Սյունիքի հանդեպ Ադրբեջանի ոտնձգությունները 2021 թվականի մայիսին, 2022 թվականի նոյեմբերին, Արցախի հետ կապված 2023 թվականի սեպտեմբերյան դեպքերն, անվտանգության նկատառումներով անհնարին են դարձրել մոտենալ տարածքներին, որի հետևանքով խոչընդոտվել են հանրային լսումները, ինչն էլ հանգեցրել է Նախագծի փորձաքննության իրականացման անհնարինությանը: Ընկերությունը հայտնել է նաև, որ դիմել է համապատասխան պետական կառույցներին՝ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալու նպատակով, և դրանք ստանալուն պես կներկայացնի Հանձնաժողով, որոնք, սակայն, մինչ օրս չեն ներկայացվել: Միևնույն ժամանակ Ընկերությունը խնդրել է իրավիճակը համարել ֆորսմաժորային և վերջինիս նկատմամբ չկիրառել տույժեր ու երկարաձգել Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու ժամկետը:

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0703 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2023 թվականի հոկտեմբերի 15-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի №3 հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում՝ Ընկերությունը չի հիմնավորել Նախագիծը ԼԷ №0703 լիցենզիայով ամրագրված ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու իր պարտավորության չկատարումը՝ ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, այն պետք է հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար: Մինչդեռ Ընկերությունը

պատշաճ հիմնավորումներ չի ներկայացրել իր կողմից մատնանշված հանգամանքների ու ԼԷ №0703 լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորության չկատարման միջև ուղղակի պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ, ինչպես նաև չի ապացուցել իր կողմից անհրաժեշտ միջոցների ու ջանքերի գործադրումը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Բացի այդ, Կարգի №3 հավելվածի 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը և 8-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0703 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի հունիսի 6-ի գրությամբ՝ Հանձնաժողով ներկայացված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.14664.22 բանկային երաշխիքի համաձայն՝ երաշխավորված 6 040 000 (վեց միլիոն քառասուն հազար) դրամ գումարից 3 020 000 (երեք միլիոն քսան հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 6 040 000 (վեց միլիոն քառասուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի օգոստոսի 2-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0703 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2024 թվականի հունիսի 15-ը.

2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում՝ ԼԷ №0703 լիցենզիայի գործողությունը կկասեցվի:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

ք. Երևան
17 հունվարի 2024թ.

Տրման նշանակման օպերատոր/
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item

«ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ ՍՅՈՒՆԻՔ ԽՆՁՈՐԵՍԿ, . .

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

☐ Առաջնային նամակ/ Priority letter
☐ Հրատարակչություն/ Printed paper
☐ Ծանրոց/ Parcel
☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

☐ Պատվիրված/Registered
☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO116339962AM

☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

AL0116339962AM

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered
☐ վճարվել է/ paid
☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.3-Մ2-12/203-2024 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

ՀԱՅ ՓՈՍՏ	Վճարված է / Tax perçue	HAYPOST

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.3-Մ2-12/203-2024 պ/տ

LO116339962AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ CN15
RETURN

- [x] Անհայտ/ Unknown
- [ ] Տեղափոխված/ Gone away
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [ ] Չի պահանջվել/ Unclaimed

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date

3207
20 JAN 2024

0002
18 JAN 2024
HayPost

«ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
Armenia ՍՅՈՒՆԻՔ ԽՆՁՈՐԵՍԿ, .

22 JAN 2024

24 JAN 2024

26 JAN 2024